1843 — 1902

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆՐԻՄ. Հ. Մ. — *Ցաւա՞չ* . . . . . 1
Մ. ՇՈՎՐԵԱՆ. — *Մատենագրական* . . . 6
ՍԱՐԵԱՆ Հ. Մ. — *Այլասերումն* . . . 15
ՕՍՍԻԱՆ. — *Ֆինգալ. Թրգմ.* Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 19
*Հռոմայ աւարառութիւնը Գոթաց ազգէն 410 տարւոյն մէջ* . . . . . 25
ԶՐԱՔԵԱՆ Հ. Ք. — *Ստեփանոս Նազարեանց* . 402
H. F. B. LYNCH. — *Աղեքսանդրապոլ Թրգմ.* ՍԱՐԵԱՆ Հ. Մ. . . . . . . 33
Ա. ԳՈՑԻԹՈՑ. — *Ներոն. Թրգմ.* Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 38
ՆՐԻՄ. Հ. Մ. — Հանդէս Հանդիսից. . 47

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեր է Ամէն. Տ. Գէորգ Եպ. Երիցեան։ Հայ. Եկեղեցւոյ ուսեալ և բարեկիրթ անդամներէն է. և կը համարուի արժանաւոր այդ բարձր պաշտօնին։

2. Փարիզու Ասիական ընկերութեան կաճառին մէջ Բանասէր Թերթի խմբագրապետ Կ. Բասմաջեան, Բնաշխարհի Մազկերտ գաւառի Գըզըլ Գալէ կոչուած տեղը գտնուած վանեան արձանագրութեան մը մասին ճառեր է։

3. Բագուցի Գ. Թումանեանց Կ. Պոլսոյ Ազգային Հիւանդանոցին 3000 ֆր. նուիրած է։

4. Բարձրապատիւ Գեր. Գ. Եպսկ. Իւթիւճեանի միջոցով Մարսէյլի մէջ. Կարնոյ ներկայ ազգային արկածելոց համար 1000 ֆր. հանգանակուեր է։ Այս կարօտեալ ազգայնոց նոյնպէս օգնութեան հասեր են Երզնկացիք, Տրապիզոնցիք, Մանիսացիք, Իզմիրցիք և Երուսաղեմայ Պատրիարք սրբազանը։

5. Մանչեստրէն Մարտիրոս Թօգատեան, ազգային մանկական վաճառականութեան և գիտական ուսմանց վարժարան մը բանալու համար մտադիր է(՞) 2000 ոսկի նուիրելու. ցանկալի է որ շուտով փափաքը կատարուի և գտնէ նոյնպիսի վարժարանի մը համար ձեռնհաս և վստահելի վարչութիւն մը։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ «ԲԱԶՄԱՎԷՊ»

ՓԱՐԻԶԷՆ. — Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Միացեալ Ընկերութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել պատուարժան խմբագրութեանդ, որ Թաւրիզում գոյութիւն ունեցող երկու Հայուհեաց Ընկերութիւնները անքակտելի պայմաններով հաստատեցին այն ցանկալի միութիւնը, որ տարիներից ի վեր մտածութեան առարկայ էր եղել և զբաղեցնում էր ազնիւ և խաղաղասէր անձանց մտքերը։ Անջատ ուժերի միացմամբ Վարչութիւնս լիայոյս է վայելել աւելի առատօրէն Հայ ազգի սէրն ու վստահութիւնը։ Միացեալ Ընկերութիւնն իւր գործունէութեան ասպարէզն ընդարձակելու է, որչափ առատ վայելէ Հայ ժողովրդի և բարեգործ անձանց նիւթական ու բարոյական օժանդակութիւնները։ Եւ արդէն բացի Թաւրիզում պահած հաստատութիւններից, Միացեալ Ընկերութիւնը ներկայ ուսումնական տարեշրջանի համար ունի Ատրպատականի Խոյ ու Խաւար անկիւններում 9 հատ գիւղական ուսումնարաններ արական սեռի, երեք հատ էլ իգական սեռի համար, որոնք ունին իրենց յատուկ ուսուցչուհիներ։ Այդ ուսումնարաններից՝ Թրքախօս Բարանդուզի Դեւլա – Թափէ և Բալաւու գիւղերի երկսեռ ուսումնարանները պահումեն Մի Բարերարի հաշւով. Երկուսը՝ Մեծ. պ. պ. Ալեքսան Մելիք Ազարեանի և Ստեփան Տէր Օհանեանի մշտական նպաստներով. իսկ մնացեալ վեց ուսումնարաններն պահումեն Ընկերութեան աղքատիկ Միջոցներով։ Միայն խնդիր է թէ ինչ չափով և որչափ ժամանակ Ընկերութիւնը պիտի կարողանայ շարունակել իւր բազմօգուտ գործը, քանի որ Ընկերութիւնը չունի դրամագլխի բաւականաչափ հասոյթ. որպէսզի գործը անխափան առաջ տանի։ Ազգիս Վեհափառ Կաթողիկոս՝ գնահատելով երկու Ընկերութեանց միացումն, Բարեհաճեց իւր Հայրապետական օրհնաբեր կոնդակով հաստատել ցանկալի Միութիւնը. խոստանալով ի դէպս իւր Հայրական աջակցութեան շնորհն չզլանալ Ընկերութեան յառաջդիմութեան համար։ Եւ արդէն մասամբ յայտնի պիտի լինի յարգելի Հայ հասարակութեան որ՝ Ընկերութիւնս Պարսկաստանում գտնւում է ընդ հովանաւորութեամբ Արեգակնափայլ Շահն – Շահի, Նորին Արքայական բարձրութիւնից տրուած «Ֆիրմանով»։

ՆԱԽԱԳԱՀ՝ ՍՐԲ. ԱՄԱՑ.

Կրթասէր և ուսումնասէր բարերարաց ներկատողութեան կը յանձնենք այս նամակը. օգնել կրթական եռանդուն գործիչներուն, նուիրական պարտք մ՚է։

ԽՄԲ. ԲԱԶՄ.

ՎԱՐՆԷՆ. (Երկրաշարժ)։ Ահա 24 օրեր ահու դողի մէջ ենք, ամենայն ինչ դադար առեր է։ Հարուստն և աղքատն հաւասարապէս անդորրութեան դատապարտուած և որ չարագոյնն է՝ մահու և կենաց սոսկալի և դժնդակ պայքարին

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ Է RÉDACTION DE LA REVUE "*PAZMAVEB*"
St. LAZARE VENISE (ITALIE)

digitised by A.R.A.R.@